Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

9-րդ դասարան

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Խորը աշուն էր: Արդեն **երրորդ** արևագալն էր, որ փորձառու որսորդը քառակուսի բարձրունքի մացառներով քողարկված քարայրում սպասում էր, երբ անտառամերձ խորխորատում կխշխշան եղեգները, ու իր թաքստոցից դուրս կգա առաջին որսը:

Այդ օրը՝ **վաղորդայնին**, միայն երևացին վագրը, նրա հետևից կորյունը և առաջացան դեպի **ժայռից** բխող սառնորակ աղբյուրը: Ջուր խմելուց վագրը գիրթ շրջվեց ու **անտառին** նայելիս՝ խրոխտ հայացքը հանկարծ բևեռեց հանդիպակաց բարձրակարկառ լեռը՝ ասես կանխազգալով մոտեցող վտանգը: Բայց անձավում ականակիր մութ էր. վագրը չէր կարող նկատել **որսորդին**:

Աստվա՜ծ իմ, որքա՜ն **գեղեցիկ** էր նա իրեն անվրդով վեհությամբ: Արևի փայլից ոսկեորված ասես ճաճանչում էր, հիացնում իր՝ շքեղ մուշտակի ճերմակ ու խարտյաշ գծերի **ներդաշնակությամբ:**

Ինչպե՜ս կարելի էր սպանել այդ գեղեցկությունը:

Եվ որսորդը, բնության այդ հրաշքից կախարդված, իջեցրեց հրացանը:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով թույլ տրված կետադրական սխալները, և անհրաժեշտ տեղերում լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները:

2. Բնագրից դո՛ւրս գրիր սխալ գործածված բառերն ու բառաձևերը՝ դիմացը նշելով ճիշտ տարբերակը:

3. Գրի՛ր *մացառ, խորխորատ գիրթ, խրոխտ, խարտյաշ, ականակիր* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ:

4.Բառակազմորեն վերլուծի՛ր *փորձառու, քառակուսի, սառնորակ* բառերը՝ ընդգծելով արմատը մեկ, ածանցը՝ երկու գծով:

5. Բնագրից դո՛ւրս գրիր չորս դերբայական դարձվածներ՝դերբայների բոլոր տեսակներով կազմված, և նշի՛ր նրանց շարահյուսական պաշտոնը:

6. Գրի՛ր բնագրում ընդգծված բառերի շարահյուսական պաշտոնները:

7. Շարահարությամբ կապված քանի՞ բաղադրիչ նախադասություն կա բնագրում:

8. Բացատրի՛ր *սիրտ տալ* և *սիրտը տալ* դարձվածքների իմաստները:

9. Գրի՛ր շարադրություն «Հանուն իմ երկրի» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում):